ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

<<Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և <<Արցախբանկ>> ՓԲ ընկերության միջև 2011 թվականի փետրվարի 18-ին կնքված՝ <<Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման>> պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցումը՝ Պայմանագրով սահմանված կարգով 2017 թվականի ընթացքում շարունակելու մասին

ք.Երևան <<24>> 02 2017թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և <<Արցախբանկ>> ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս վարչության նախագահ-գործադիր տնօրեն Արթուր Մխիթարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (ասյուհետ՝ Կողմեր), 2011 թվականի փետրվարի 18-ին կնքված <<Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման>> պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1 կետի համաձայն՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի N 1 հավելվածի՝ 10 բաժնի, 09 խմբի, 02 դասի N 06 ծրագրերի ֆինանսավորման համար սահմանված հատկացումները, Կողմերը համաձայնվել են 2017 թվականի համար Պայմանագրի գինը սահմանել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Կողմերի միջև 2011 թվականի փետրվարի 18-ին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

2.3. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556348 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Ծառայության աշխատակազմի ղեկավար	<<Արցախբանկ>> ՓԲ ընկերության վարչության նախագահ-գործադիր տնօրեն ք.Երևան Կիևյան 3 Հ/Հ 22300007054800 ՀՎՀՀ 01533411
Մ.Մինասյան	Ա.Մխիթարյան
Կ.Տ	Կ.Տ